



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE


Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՅ ՅՈԳԵՒՈՐ ԵՂԲԱՅՐԱԿՅՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Չորեքշաբթի, 12 Յունուարին Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր.



S. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ազգային Առաջնորդարանին մէջ ընդունեց այցելութիւնը Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Յոգեւոր Եղբայրակցութեան պատուիրակութեան, որ Ազգ. Առաջնորդարան եկած էր Ամանորի ու Ս. Ծննդեան տօներուն առիթով շնորհաւորանք ու բարեմաղթութիւն

ներկայացնելու Առաջնորդ Սրբազանին: Սրբազան Յօր կողքին ներկայ էր նաեւ Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան:

Հիւր պատուիրակութեան անդամները Առաջնորդ Սրբազանին հակիրճ տեղեկութիւններ տուին Եղբայրակցութեան եկեղեցանուէր ու ժողովրդանուէր ծառայութիւններուն մասին:

Հանդիպումը առիթ ծառայեց խորհրդակցելու Եղբայրակցութեան ու մեր եկեղեցիներուն միջեւ գործունեութեան հասարակաց դաշտերուն ու զանոնք աւելի եւս զարգացնելու կարելիութիւններուն մասին:

Առաջնորդ Սրբազանը գնահատանքով արտայայտուեցաւ Եղբայրակցութեան գործունեութեան մասին ու ողջունեց գործակցութիւնը սերտացնելու ներկայացուցիչներուն պատրաստակամութիւնը:

Ան այս առիթով նաեւ յուշանուէրներ յանձնեց պատուիրակութեան անդամներուն:

PRELATE WELCOMES MEMBERS OF THE

ARMENIAN ECCLESIASTICAL BROTHERHOOD

On Wednesday, January 12th, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy a delegation from the Armenian Ecclesiastical Brotherhood, who had come to convey their well wishes to the Prelate on the occasion of the New Year and Christmas.

The Prelate and guests discussed the collaboration that exists between the Brotherhood and our churches, and spoke of expanding these efforts.

The Prelate commended the service of the members, and presented them with the mementos at the conclusion of the visit.